ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2024 թվականի թիվ 1521-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԾԱՆՐ ԱՍՏԻՃԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՈՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԹՈՒՐԻ ԽԱԼԱԹՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Առափի գյուղի բնակիչ Հովհաննես Արթուրի Խալաթյանը (անձնագիր՝ AP0690090, տրված 30.01.2017թ., 016 կողմից, հաշվառված է ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք, Առափի գյուղ 4-րդ փողոց 98 տուն հասցեում) դիմում է ներկայացրել Ախուրյանի համայնքի ղեկավարին, խնդրելով՝ ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան իր հինգ անձից բաղկացած ընտանիքին Ախուրյան համայնքում վերցնել բնակարանային հաշվառման:

2.ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ՝

1) ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Առափի գյուղի բնակիչ Հովհաննես Արթուրի Խալաթյանը հիվանդությունը ձեռք է բերել 2020 թվականին՝ հակառակորդի հետ շփման գծում, հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով, ունի ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով (2-րդ խմբի) հաշմանդամություն (հիմք՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ԶՍՊՎ 2024 թվականի օգոստոսի 26-ի N 36/2375 տեղեկանքը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2022 թվականի օգոստոսի 19-ի N 108-Ա/1 հրամանի N 2 հավելված, անձի ֆունկցիոնալության գնահատման որոշումը՝

N 2024, ԿԳԺ-13349.55-10399.455):

2) Հովհաննես Արթուրի Խալաթյանի ընտանիքը սեփականության իրավունքով չունի բնակարան կամ բնակելի այլ շինություն, նրա ընտանիքը 5 անձով հաշվառված բնակվում է ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք, Առափի գյուղ 4-րդ փողոց 98 տուն հասցեում գտնվող բնակելի տանը, որը հանդիսանում է վերջինիս հարազատի՝ Սամվել Մանվելի Տոնոյանի

(ծնված՝ 20.09.1990թ, անձնագիր՝ N 006477392, տրված 07.11.2017թ. 064-ի կողմից) սեփականությունը (վկայական N 17092019-08-0013):

Հովհաննես Արթուրի Խալաթյանի ընտանիքը սեփականության իրավունքով չունի բնակարան կամ այլ բնակելի տարածություն (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի 16/09/2024թ. N ԱՏ-16092024-99-0036 և ՆԱՏ-16092024-99-0137 տեղեկանքները և ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակարանային հարցերի հանձնաժողովի եզրակացությունը):

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ու հատուկ ստորաբաժանումների՝ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգի 8-րդ և 9-րդ կետերի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի նախկին զինծառայող, ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամ, Հովհաննես Արթուրի Խալաթյանի հինգ անձից բաղկացած ընտանիքի ներքոհիշյալ անդամներին ընդգրկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակարանային պայմանների բարելավման կարիքավորների ցուցակում:

1) Հովհաննես Արթուրի Խալաթյան, ծնված 23.05.1994թ, ինքը,
2) Ջուլիետա Սերժիկի Խալաթյան, ծնված 01.01.1992թ, կինը,
3) Աննա Հովհաննեսի Խալաթյան, ծնված 27.12.2015թ, դուստրը,
4) Անգելինա Հովհաննեսի Խալաթյան, ծնված 03.01.2020թ, դուստրը,
5) Անժելա Հովհաննեսի Խալաթյան, ծնված 31.03.2022թ, դուստրը,

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Առափի բնակավայրի բնակիչ Հովհաննես Արթուրի Խալաթյանի ընտանիքին պատշաճ իրազեկել սույն որոշման մասին՝ վերջինիս տրամադրելով սույն որոշման օրինակը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Արթուրի Խալաթյանի ընտանիքին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«27» դեկտեմբերի 2024 թվական
գյուղ Ախուրյան